ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«18» ապրիլի 2016թ.

Հաստատում եմ՝
«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
պետ _____ Մ. Անանյան

ԳԲԽ-29/16 բողոքը քննող
հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով Ա. Ափալակյանի 01.04.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. **Ա. Ափալակյանի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 01.04.2016թ. ներկայացրած բողոքով Ա. Ափալակյանը (այսուհետ նաև՝ Բողոքաբեր) հայտնել է, որ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից հայտարարվել է «ԲԷՑ-ԲԸԱՇՁԲ-16/04» ծածկագրով բաց ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որի վերաբերյալ հայտարարությունը պետք է հրապարակվեր www.gnumner.am համացանցային կայքում, որը նախատեսված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 24-րդ հոդվածի՝

• 1-ին մասի համաձայն՝ բաց ընթացակարգով գնում կատարելու համար մասնակիցներ ներգրավելու նպատակով տեղեկագրում և http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակվում են գնումների հայտարարություն և հրավեր:

• 2-րդ մասի համաձայն՝ բաց ընթացակարգի դեպքում հայտերի ներկայացման համար նախատեսվող ժամկետը պետք է պակաս չլինի քառասուն օրացուցային օրից, որը հաշվարկվում է տեղեկագրում գնումների հայտարարության և հրավերի հրապարակման պահից:

Օրենքի 2-րդ հոդվածի 16-րդ մասի համաձայն՝ օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝ տեղեկագիր՝ լիազորված մարմնի կողմից հրապարակվող «Գնումների էլեկտրոնային տեղեկատու», ինչն էլ տվյալ դեպքում հանդիսանում է www.gnumner.am համացանցային կայքը, որտեղ հրապարակվում են գնման ընթացակարգերի վերաբերյալ բոլոր հայտարարությունները:

Բողոքաբերը հայտնել է, որ www.gnumner.am համացանցային կայքի «Հայտարարություններ» բաժնի «Պայմանագիր կնքելու մասին հայտարարություններ» ենթաբաժինն ուսումնասիրելիս, նկատել է «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից հայտարարված «ԲԷՑ-ԲԸԱՇՁԲ-16/04» ծածկագրով բաց ընթացակարգով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը: Սակայն, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից հայտարարված չի եղել գնման ընթացակարգ, իսկ, եթե հայտարարված է եղել, ապա միայն իրենց նախընտրելի մասնակցի համար, քանի որ կայքի թե գնումների հայտարարություններ բաժնում, թե կայքի արխիվում չկա նման ընթացակարգ հայտարարելու մասին հայտարարություն: Բացի այդ, Ընթացակարգին մասնակցել է ընդամենը մեկ մասնակից:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված նպատակի իրագործման համար, գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

1) գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:
- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին որևէ անձի մասնակցությունը կարող է սահմանափակվել միայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, եթե դա անհրաժեշտ է՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության և պաշտպանության ապահովման համար:

Օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված է, որ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն՝ նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի որոշումները գնումների բողոքարկման խորհրդին:

Բողոքաբերը նշել է, որ Օրենքի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Օրենքի 48-րդ հոդվածով սահմանված է, որ Գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի հայտարարելու պատվիրատուի գնումների ընթացակարգի օրինական կամ ապօրինի լինելու մասին՝ պայմանագիրը կնքելուց հետո և այս պարագայում հենց այս հիմքով է ներկայացվում բողոքը, քանի որ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն կարող

է կնքած լինի պայմանագիր՝ հաշվի առնելով, որ միայն մեկ մասնակից է մասնակցել նշված ընթացակարգին:

Ըստ Բողոքաբերի՝ Պատվիրատուի կողմից խախտվել է Օրենքի 3-րդ, 6-րդ, 24-րդ հոդվածներով նախատեսված դրույթները:

Ելնելով վերոգրյալից՝ Ա. Ափալակյանը խնդրել է «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված Ընթացակարգը հայտարարել ապօրինի:

Բողոքաբերը պատշաճ ծանուցված լինելով ԳԲԽ-29/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի օրվա և ժամի մասին, չի ապահովել իր մասնակցությունը Կենտրոնում 06.04.2016թ. ժամը 12:30-ին տեղի ունեցած հանձնաժողովի նիստին:

2. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն 05.04.2016թ. թիվ 13-01/568 գրությամբ Ա. Ափալակյանի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է, որ Պատվիրատուի կողմից «Գորիս» մասնաճյուղի Նորավան տեղամասի վարչական շենքի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԲԷՑ-ԲԸԱՇՁԲ-16/04» ծածկագրով բաց ընթացակարգն իրականացվել է բացառապես «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի համաձայն, իսկ Ընթացակարգի հրավերը կազմվել է բացառապես ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ նաև՝ Նախարարություն) www.gnumner.am համացանցային կայքում զետեղված բաց ընթացակարգի օրինակելի ձևին համապատասխան:

Ընթացակարգի հայտարարությունը և հրավերը 29.01.2016թ. ժամը 16:14-ին էլեկտրոնային եղանակով ուղարկվել է ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության գնումները համակարգողին, իսկ վերջինս հայտարարությունը և հրավերը 30.01.2016թ. հրապարակել է ՀՀ ֆինանսների նախարարության www.gnumner.am համացանցային կայքում: Այնուհետև, Ընթացակարգն իրականացվել է սահմանված կարգին համապատասխան և արդյունքում կնքվել է գնման պայմանագիր:

Ըստ Պատվիրատուի, իրենց գործողությունների արդյունքում Օրենքի 24-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել:

Կենտրոնում 06.04.2016թ. ժամը 12:30-ին տեղի ունեցած ԳԲԽ-29/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչները, ներկայացնելով Ընթացակարգի հայտարարությունը և հրավերը, հայտնել են, որ դրանք **30.01.2016թ.** հրապարակվել են ՀՀ ֆինանսների նախարարության www.gnumner.am համացանցային կայքում, սակայն համաձայն Նախարարության 02.02.2016թ. թիվ 1/73-1/3236-16 շրջաբերականի, հնարավոր է, որ վերջինիս կողմից կայքի գործածության հետ կապված որոշ խնդիրների կարգավորման աշխատանքների արդյունքում, Պատվիրատուի հրապարակած տեղեկատվությունը հեռացվել է: Միևնույն ժամանակ, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն նիստով հայտնել է, որ վերը նշված տեղեկատվությունը http://www.azdarar.am կայքում վերջինիս կողմից առհասարակ չի հրապարակվել:

3. ԳԲԽ-29/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-29/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից «Գորիս» մասնաճյուղի Նորավան տեղամասի վարչական շենքի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԲԷՑ-ԲԸԱՇՁԲ-16/04» ծածկագրով բաց ընթացակարգ:

2. Պատվիրատուի կողմից Կենտրոնին տրամադրված Ընթացակարգի հայտարարության տեքստի մեջ նշվել է, որ սույն տեքստը հաստատված է բաց ընթացակարգի հանձնաժողովի 2016թ. հունվարի 29-ի «01» որոշման հիման վրա և հրապարակվում է Օրենքի 24-րդ հոդվածի համաձայն:

Բաց ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ, ք. Երևան, Զ. Անդրանիկի փող. 1 հասցեով, փաստաթղթային ձևով մինչև սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված 41-րդ օրը ժամը 12:00-ին:

3. ՀՀ ֆինանսների նախարարությունը (այսուհետ նաև՝ Նախարարություն) 02.02.2016թ. թիվ 1/73-1/3236-16 շրջաբերականով դիմել է ՀՀ պետական կառավարման

մարմինների աշխատակազմերի ղեկավարներին, Երևանի քաղաքապետարանին, պատճենը՝ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ հայտնելով, որ www.gnumner.am կայքի գործածության հետ կապված որոշ խնդիրների կարգավորման նպատակով աշխատանքներ են կատարվել վերջիններիս շտկման ուղղությամբ, որի արդյունքում կայքից հեռացվել է սույն թվականի փետրվարի 1-ին տեղադրված տեղեկատվությունը: Դրանով պայմանավորված՝ Նախարարությունն առաջարկել է կրկին տեղադրել սույն թվականի փետրվարի 1-ին հրապարակված տեղեկատվությունը՝ միաժամանակ ստուգելով ***սույն թվականի հունվարի 29-31-ն ընկած ժամանակահատվածում տեղադրվածները՝ խնդրելով վերջիններիս բացակայության դեպքում դրանք նույնպես տեղադրել հիշյալ կայքում:***

4. Պատվիրատուի կողմից ներկայացված էլեկտրոնային քաղվածքի ուսումնասիրությունից երևում է, որ Ընթացակարգի հայտարարության տեքստը www.gnumner.am համացանցային կայքում տեղադրելու համար, 29.01.2016թ. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի gnumner@hven.am էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկվել է ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության ladonts@minenergy.am էլեկտրոնային փոստի հասցեին:

5. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից Ընթացակարգով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվել է www.gnumner.am համացանցային կայքում:

ԳԲԽ-29/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով Ա. Ափալակյանի 01.04.2016թ. ներկայացրած բողոքը, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի 05.04.2016թ. թիվ 13-01/568 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, Ընթացակարգի հայտարարությունը, ՀՀ ֆինանսների նախարարության 02.02.2016թ. թիվ 1/73-1/3236-16 շրջաբերականը, հայտնում է հետևյալը.

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված նպատակի իրագործման համար, գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

1) գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի՝

• 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի ***գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք***:

• 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին որևէ անձի մասնակցությունը կարող է սահմանափակվել միայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, եթե դա անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության և պաշտպանության ապահովման համար:

Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***բաց ընթացակարգով գնում կատարելու համար*** մասնակիցներ ներգրավելու նպատակով տեղեկագրում և http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակվում են գնումների հայտարարություն և հրավեր:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ***բաց ընթացակարգի դեպքում հայտերի ներկայացման համար նախատեսվող ժամկետը պետք է պակաս չլինի քառասուն օրացուցային օրից, որը հաշվարկվում է տեղեկագրում գնումների հայտարարության և հրավերի հրապարակման պահից:***

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը բացվում են հրավերում նշված պահին՝ հայտերի բացման նիստում: Հայտերի բացման օրը և ժամը պետք է համընկնեն դրանք ներկայացնելու վերջնաժամկետին:

ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 37-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ ***գնումների հայտարարության և հրավերի*** կամ նախաորակավորման հայտարարության տեքստերը հաստատվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարը՝ գնումների հայտարարության և հրավերի կամ նախաորակավորման հայտարարության տեքստերը, իսկ շինարարական ծրագրերի գնման դեպքում նաև ծավալաթերթ-նախահաշիվը, ներառյալ ըստ աշխատանքների կատարման արժեքները, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի ***սահմանած կարգով հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:***

ՀՀ ֆինանսների նախարարի 21.12.2012թ. «Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հրապարակման ենթակա տեղեկատվության հրապարակման կարգը հաստատելու մասին» N 1153-Ն հրամանի հավելվածով հաստատված «Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հրապարակման ենթակա տեղեկատվության հրապարակման կարգ»-ի 2-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ նույն կարգով նախատեսված տեղեկատվությունը գնումների էլեկտրոնային տեղեկատուում հրապարակում է հետևյալ կերպ.

Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինները հրապարակում են իրենց ենթակայությամբ գործող պետական ոչ առևտրային կազմակերպությունների ու պետության հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպությունների գնումների մասով հրապարակման ենթակա տեղեկատվությունը:

Պատվիրատուի կողմից ներկայացված էլեկտրոնային քաղվածքի ուսումնասիրությունից երևում է, որ Ընթացակարգի հայտարարության տեքստը www.gnumner.am համացանցային կայքում տեղադրելու համար, 29.01.2016թ. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի gnumner@hven.am էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկվել է ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության ladonts@minenergy.am էլեկտրոնային փոստի հասցեին:

Այսպիսով, Պատվիրատուն հայտնել է, որ Ընթացակարգի հայտարարությունը և հրավերը 30.01.2016թ. տեղադրվել են www.gnumner.am համացանցային կայքում, սակայն որևէ ապացույց վերջինիս կողմից չի ներկայացվել:

Կենտրոնի կողմից կատարված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ www.gnumner.am համացանցային կայքում (ինչպես նաև արխիվում) և http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում առկա չէ «ԲԷՑ-ԲԸԱՇՁԲ-16/04» ծածկագրով բաց ընթացակարգի վերաբերյալ հայտարարությունը և հրավերը:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 02.02.2016թ. թիվ 1/73-1/3236-16 շրջաբերականով դիմել է ՀՀ պետական կառավարման մարմինների աշխատակազմերի ղեկավարներին, Երևանի քաղաքապետարանին, պատճենը՝ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ հայտնելով, որ www.gnumner.am կայքի գործածության հետ կապված որոշ խնդիրների կարգավորման նպատակով աշխատանքներ են կատարվել վերջիններիս շտկման ուղղությամբ, որի արդյունքում կայքից հեռացվել է սույն թվականի փետրվարի 1-ին տեղադրված տեղեկատվությունը: Դրանով պայմանավորված՝ Նախարարությունն առաջարկել է կրկին տեղադրել սույն թվականի փետրվարի 1-ին հրապարակված տեղեկատվությունը՝ միաժամանակ ստուգելով ***սույն թվականի հունվարի 29-31-ն ընկած ժամանակահատվածում տեղադրվածները՝ խնդրելով վերջիններիս բացակայության դեպքում դրանք նույնպես տեղադրել հիշյալ կայքում:***

Պատվիրատուն նիստով հայտնել է, որ հավանաբար Նախարարության կողմից www.gnumner.am համացանցային կայքի գործածության հետ կապված որոշ խնդիրների կարգավորման աշխատանքների արդյունքում, Պատվիրատուի 30.01.2016թ. հրապարակած տեղեկատվությունը հեռացվել է:

Կենտրոնն ընդունում է այն փաստը, որ հնարավոր է Պատվիրատուի 30.01.2016թ. www.gnumner.am համացանցային կայքում հրապարակված տեղեկատվությունները վերը նշված պատճառաբանությամբ ջնջվել են, սակայն համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության 02.02.2016թ. թիվ 1/73-1/3236-16 շրջաբերականի, Պատվիրատուն պարտավոր էր ստուգել հրապարակված տեղեկատվությունը, որի ***բացակայության դեպքում*** կրկին պետք է տեղադրեր այն ***հիշյալ կայքում:***

Միևնույն ժամանակ, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն նիստով հայտնել է, որ վերը նշված տեղեկատվությունը http://www.azdarar.am կայքում վերջինիս կողմից առհասարակ չի հրապարակվել, սակայն Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում է, որ Պատվիրատուն ***բաց ընթացակարգով գնում կատարելու համար*** մասնակիցներ ներգրավելու նպատակով, ոչ միայն տեղեկագրում, այլ նաև http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում պետք է հրապարակի գնումների հայտարարություն և հրավեր, ինչը տվյալ դեպքում նույնպես տեղի չի ունեցել:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, այն հանգամանքը, որ հայտերի բացման օրը և ժամը պետք է համընկնեն դրանք ներկայացնելու վերջնաժամկետին, իսկ բաց ընթացակարգի դեպքում հայտերի ներկայացման համար նախատեսվող ժամկետը պետք է պակաս չլինի քառասուն օրացուցային օրից, որը հաշվարկվում է տեղեկագրում գնումների հայտարարության և հրավերի հրապարակման պահից (30.01.2016թ.), գտնում ենք, որ Պատվիրատուի կողմից խախտվել են 24-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված պահանջները, ինչի արդյունքում սահմանափակվել է մասնակիցների մասնակցության իրավունքն Ընթացակարգին:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք Ա. Ափալակյանի 01.04.2016թ. ներկայացրած բողոքը բավարարել. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից «Գորիս» մասնաճյուղի Նորավան տեղամասի վարչական շենքի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԲԷՑ-ԲԸԱՇՁԲ-16/04» ծածկագրով բաց ընթացակարգը հայտարարել ապօրինի:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ՝ Մ. Կատվալյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-29/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Գրիգորյան